հետ, և թաթար լեզուին լեհերէնի փոխելով՝ գրեթէ բոլորովին կը լեհանան։

Սակայն պէտք է այս եւս խոստովանինք՝ որ Հայք շատ երկար ժամանակ պատերազմած են այդ բանին դէմ, 600 տարի դիմացած են, իրենց ազգութեան մէջ 'ի հեռաւոր հիւսիսական աշխարհին, հրշապատեալ օտար տարրերով։ Ժամանակին պատմիչ մի կը վկայէ (Վերդում), որ «Հայք իրենք զիրենք հեռու կը բռնեն, ինչպէս 'ի Լեհաց նոյնպէս և յայլոց ազգաց, յար և նման Հրէից, միայն այս տարբերութեամբ որ՝ Հրեայք աղքատ են և ծառայամիտ, այլ Հայք ճոխք և ինքնապանծք։ Նոցա թխամորթ կերպարանքէն և դուրս ցցուած համարձակ հայուածքէն շուտով կարելի է զանազանել զնոսա այլ ազգերէ, ինչպէս զՀրեայս՝ իրենց տժգոյն և ապուշ կերպարանքէն։ Հայք ոչ կամաւ կամ յօժարութեամբ կը կապուին ամուսնութեամբ օտարաց հետ».

Մինչև ԺԶ դար հայերէն խօսած են Կամենիցի Հայք. այդ դարուն վերջերը, Ընեցւոց կոկ հայերէնը փոխած են իրենց տունը ուրոշ-քանդող թաթարաց խոշորալուր բարբառին, և մինչև 1625 այդ խժալուր բարբառով խօսելէն և գրելէն վերջը, նաև առանց ամաչելու այդ լեզուաւ աղօթելէն վերջը, սկսած են Լեհաց լեզուն գործածել, մեր նախնեաց լեզուն Տէրտէրներու ժառանգութիւն թողլով։

Լեզուի հետ անխտիր խնամութիւնը մնած է, որ եղած է պատճառ այս վերջին 200 տարուան միջոցին մերոց լեհանալուն։ Վասն զի 1676 ին Լեհաստանի մէջ 4000 հայ ընտանիք կը համրուին, միայն Կամենիցի մէջ 1200 տուն, որ քաղաքին